ՁԵՌԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՎԵՑ ՏԱՎՈՒՇԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 3-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց սահմանամերձ Տաշիր՝ կատարելու օծումը նորակառույց Ս. Սարգիս եկեղեցու:

Լոռու մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Տոնական փրամաղրություն էր Տաշիրում: Վեհափառ Հայրապետին ծափողջույններով ու ցնծությամբ դիմավորեցին քաղաքի դպրոցականները, որոնց երկար ու ձիգ շարքերի միջով Նորին Սրբությունն առաջնորդվեց եկեղեցի: Եկեղեցու օծման առիթով Տաշիր էին ժամանել նաև Աժ բազմաթիվ պատգամավորներ:

Վերջին հարյուր տարիների ընթացքում պատմական Տաշիրը զրկված է եղել աղոթքի տուն ունենալու հնարավորությունից: Տաշիրցի եղբայրներ Սամվել և Աժ պատգամավոր Կարեն Կարապետյանների հովանավորությամբ կառուցված եկեղեցին այժմ միակն է այս տարածքում:

Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Ս. Սեղանը, որից հետո Նորին Սրբությանն ուղեկից Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և թեմական առաջնորդ Սեպուհ Սրբազանն օծեցին բոլոր սյուներն ու մկրտության ավազանը:

Սրբազան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքն ու պատգամը հղեց ներկաներին: Ցավով նշելով, որ աստվածմերժության յոթանասուն տարիներն իրենց բացասական հետքն են թողել ժողովրդի հոգեբանության վրա, այնուհանդերձ Հայոց Հայրապետը համոզմունք հայտնեց, որ նորակառույց եկեղեցին ունկնդիր ու հաղորդակից դարձնելով ժողովրդին Աստծո խոսքին և Ավետարանի պատվիրաններին, կդառնա հոգեփոխության, կյանքի բարեփոխության և բարօրության հիմք:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ իր գնահատանքը հայտնեց թեմական առաջնորդին, որը հոգևորականների փոքրաթիվ բանակով կարողանում է կազմակերպել ժողովրդի հոգևոր կյանքը՝ հեռու պահելով այն կրոնական այլ քարոզչություններից: Իբրև նվեր նորակառույց եկեղեցուն, Վեհափառ Հայրապետը Սրբազան Հորը հանձնեց Հայ Եկեղեցու սիրված սրբերից Ս. Գևորգի սրբապատկերը:

Օծման արարողությունից հետո Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը: